ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Ք. Երևան, 28 օգոստոսի 2019 թվական
Ժամը 11:10-13:20

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (խորհուրդ) նիստի

Մասնակցում էին՝

Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (խորհրդի նիստը վարող)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան – <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ ղեկավար (խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (խորհրդի անդամ)
Ն. Սարգսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (խորհրդի անդամ)
Գ. Ավետիսյան – ՍԱՏՄ ղեկավար
Հ. Ասլանյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ
Ա. Ավետիսյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական
Ա. Բաբայան – <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ
Գ. Հովհաննիսյան – ՍԱՏՄ ներքին անվտանգության և աուդիտի վարչության պետի ժ/պ
Մ. Երիցյան – ՍԱՏՄ իրավաբանական վարչության պետի ժ/պ
Է. Բասենցյան – ՍԱՏՄ ընդհանուր բաժնի պետ

Բացակայում էին՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Ռ. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն (խորհրդի անդամ)

ՍԱՏՄ կառավարման խորհրդի նախագահի լիազորագրով (կցվում է) նիստը վարեց ՀՀ առողջապահության նախարար Ա. Թորոսյանը: Նախարարը նշեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց քվեարկել օրակարգի հաստատման համար:

Բ. Պիպոյանն առաջարկեց օրակարգից հանել ստուգումների պլանի հետ կապված հարցը և օրակարգում ընդգրկել ռիսկերի կենտրոնի նշանակման հարցը:

Ա. Ասոյանի կարծիքով, ռիսկերի կենտրոնի նշանակման հարցը նպատակահարմար է քննարկել նախորդ նիստում կայացված որոշումների կատարման մասին հաշվետվությունների

համատեքստում՝ օրակարգային հարցերը սպառելուց հետո: Նա առաջարկեց օրակարգում ներառել ևս 2 հարց՝ 1)<<Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին (սառնարան-ավտոմեքենա), 2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1640-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

Նախարարն առաջարկեց ստուգումների պլանի ընդունման նպատակահարմարությունը քննարկել օրակարգային հարցի շրջանակներում և ընդունել օրակարգը լրացնելու մասին Ա. Ասոյանի առաջարկությունը:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

1. ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թվականի երկրոդ կիսամյակում իրականացվելիք ստուգումների ծրագրին հավանություն տալու մասին

(Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան, Ա. Պողոսյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ 2-րդ կիսամյակի պլանի հաստատումը պայմանավորված է մարմնի վերակազմակերպման հարցով:

Պ. Պիպոյանն առանձնացրեց 2 խնդիր՝ 1) պլանի հաստատումը ժամանակավրեպ է, քանի որ այն օրենքով սահմանված կարգով պետք է գործի հրապարակումից 1 ամիս անց՝ հոկտեմբերին, 2) դեկտեմբերին մարմնի գերծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկը (մոնիթորինգային ծրագրերի իրականացում, ամանորի հետ կապված ուժեղացված հսկողություն) կարող է բերել կամ ստուգումների պլանի, կամ մոնիթորինգային ծրագրերի թերակատարման: Նա ընդգծեց պլանի մշակման ժամանակ ռիսկայնության հաշվարկի կարևորությունը և բովանդակային քննարկման անհրաժեշտությունը և առաջարկեց մինչև տարեվերջ իրականացնել մոնիթորինգ և դիտարկում՝ հանրային իրազեկման բարձրացման միջոցով մեծացնելով ահազանգերի թիվը, իսկ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը սահմանված կարգով հաստատել ստուգումների 2020 թվականի պլանը:

Նախարարին հետաքրքրեց, թե արդյոք օրենքին չի հակասում ստուգումների պլան չունենալը և առաջարկեց ներկայացնել ստուգումների եռամսյակային պլան՝ մոնիթորինգային ծրագրում ներառված կազմակերպությունները հանելով ցանկից:

Նախարարն առաջարկեց հանձնարարել տեսչական մարմնի ղեկավարին՝ մշակել և Խորհրդի քննարկմանը ներկայացնել 2019 թվականի եռամսյակային և 2020 թվականի ստուգումների պլանները մեթոդաբանության հիման վրա՝ հաշվի առնելով տեսչական մարմնի հնարավորությունները:

Ա. Պողոսյանը խոսեց ստուգումների ընթացքում տնտեսվարողների նույնականացման խնդրի վերաբերյալ և առաջարկեց ցանկում ներառել տնտեսվարողների հարկ վճարողի հաշվառման համարները (ՀՎՀՀ-ները):

Ա. Ասոյանն առաջարկեց հաստատել եռամսյակային պլան՝ ներկայացված փաստաթղթի լրամշակումից հետո, պլանը ուղղորդել դեպի ռիսկային ոլորտներ, ինչպես նաև հանձնարարել տեսչական մարմնին՝ 1 շաբաթվա ընթացքում լրամշակել ծրագիրը և ներկայացնել Խորհրդի անդամների քննարկմանը, հավանության արժանանալուց հետո հաստատել և հրապարակել սահմանված կարգով:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) լրամշակել պլանի նախագիծը որպես եռամսյակային ծրագիր՝ մեթոդաբանության հիման վրա,

2) մեկշաբաթյա ժամկետում խորհրդի անդամներին ներկայացնել ծրագրի լրամշակված տարբերակը,

3) էլեկտրոնային քվեարկության արդյունքներով հավանության արժանանալուց հետո սահմանված կարգով հրապարակել:

2. 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կատարված հիմնական աշխատանքների արդյունքների հաշվետվություն

(Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան, Տ.Գաբրիելյան, Բ.Պիպոյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը համառոտ ներկայացրեց կատարված աշխատանքները:

Տ. Գաբրիելյանի հարցին, թե ոչխարների արտահանման (տարանցիկ փոխադրման) հետ կապված խնդիրը լուծված է արդյոք, Գ. Ավետիսյանը հայտնեց, որ առաջիկա օրերին հանձնաժողովը պետք է զննի տարածքները և տրամադրի եզրակացություն, բացի այդ, հաստատվելու են նաև անասնաբուժական վկայականների ձևեր՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համար:

Ա. Ասոյանն առաջարկեց լրամշակել հաշվետվության տեքստը՝ <<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

Բ. Պիպոյանի կարծիքով, հաշվետվության մեջ նշված չեն ոլորտի բացթողումները, օրինակ՝ անասնաբույժների նկատմամբ կիրառվող տույժերը: Նրա խոսքով, անասնաբուժության բնագավառում տեսչական գործունեությունը պետք է ուղղված լինի թաքնված գլխաքանակի բացահայտմանը և համարակալմանը, անհրաժեշտության դեպքում սանկցիաներ կիրառի օրինազանց անասնաբույժի կամ գյուղացու նկատմամբ: Նա կարևորեց նաև այն հարցը, թե ներկայումս գործող մարմինը տեսչական գործառույթներից զատ ունի արդյոք ծառայությունների մատուցման գործառույթ:

Տ. Գաբրիելյանի հարցին, թե ինչ գործիքով և ինչ եղանակով է տեսուչը պարզում՝ կենդանին պատվաստված է, թե ոչ, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ տեսչական մարմնի կողմից մշակվել է կենդանիների հաշվառման գործընթացի մեխանիզմ, իսկ կենդանու պատվաստված լինելը պետք է պարզվի սերոմոնիթորինգի միջոցով (առայժմ կատարվում է միայն դաբաղ հիվանդության նկատմամբ): Նախատեսվում է նաև համայնքների ղեկավարներից պարբերաբար ստանալ անասնատերերի և անասնագլխաքանակների ցուցակ:

Բ. Պիպոյանն առաջարկեց հաշվետվություն կազմելիս նշել, թե տեսչական մարմինն իր լիազորությունների շրջանակում ինչ գործողություններ պետք է աներ, ինչը հնարավոր կլիներ համադրել փաստացի կատարված աշխատանքների հետ և տալ գնահատականներ:

Ա. Ասոյանի կարծիքով, համեմատականը հնարավոր կլիներ տարեկան գործունեության պլանի հաստատված լինելու պարագայում: Նա առաջարկեց Խորհրդի հաստատմանը ներկայացնել տարեկան գործունեության պլանը և հաշվետվության լրամշակված տարբերակը:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց հարցը ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) մշակել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել 2019 թվականի գործունեության տարեկան պլանը,

2) հաշվետվության լրամշակված տարբերակը ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

3. 2018թ. ընթացքում ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

(Գ.Ավետիսյան, Ա.Ասոյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը նշեց, որ փաստաթուղթն արդեն հրապարակված է, սակայն խորհրդի քննարկմանը ներկայացնելը պայմանավորված է օրենքի պահանջով:

Ա. Ասոյանն առաջարկեց լրամշակել հաշվետվությունը և ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) հարցին հավանություն տալ,

2) հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ հաշվետվության լրամշակված տարբերակը ներկայացնել էլեկտրոնային քվեարկության

3) Խորհրդի հավանությունը ստանալուց հետո սահմանված կարգով հրապարակել <<Լրամշակված տարբերակ>> նշումով:

4. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածության ներկայացում, քննարկում և ընտրություն

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Տ. Գաբրիելյան, Բ. Պիպոյան, Ն. Սարգսյան, Մ. Բեգլարյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը համառոտ ներկայացրեց թեկնածուի կենսագրական տվյալները և աշխատանքային գործունեությունը:

Բ. Պիպոյանի հարցին, թե կա արդյոք տեսչական մարմնի տեղակալների միջև աշխատանքների բաշխման վերաբերյալ հրաման, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ նախատեսվում է այն ունենալ 2-րդ տեղակալի նշանակումից հետո:

Նախարարը կարևորեց տեղակալների միջև գործառույթների բաժանումը մինչև կոնկրետ անձանց ընտրությունը, քանի որ անձը պետք է համապատասխանի տվյալ պաշտոնին, ոչ թե պաշտոնը հարմարեցվի անձի կարողություններին: Նախարարի առաջարկությամբ որոշվեց լսել թեկնածուին:

Թեկնածու Գ. Սարոյանը ներկայացրեց իր կենսագրությունը և պատասխանելով նախարարի հարցին՝ հավելեց, որ իրավաբանի իր մասնագիտությունը կարող է համադրել ոլորտային առանձնահատկությունների հետ՝ իր գործունեությամբ հնարավորինս պաշտպանելով թե քաղաքացու և թե պետության շահը:

Բ. Պիպոյանի հարցին, թե բացի իրավաբանությանն առնչվող հարցերով զբաղվելուց, ուրիշ որ ուղղության մեջ է իրեն տեսնում, թեկնածուն պատասխանեց, որ իրեն հանձնարարված ոլորտները համակարգելու համար ունի կամ կարող է ձեռք բերել համապատասխան գիտելիքներ և կարողություններ:

Ա. Պողոսյանի հարցին, թե տեսչական մարմինը պետք է լինի միայն տեսչական գործառույթով օժտված (կանխարգելող գործիքների կիրառմամբ), թե նաև խորհրդատվություն տրամադրող կառույց, թեկնածուն պատասխանեց, որ միայն պատիժը, տուգանքը և սանկցիաները չեն կարող տանել ոլորտի լիարժեք կարգավորման, և իր կարծիքով, քաղաքացիների և հասարակության իրավագիտակցության և իրազեկման միջոցով հնարավոր կլինի բարձրացնել տեսչական մարմնի աշխատանքների արդյունավետությունը:

Ա. Ասոյանի հարցին, թե ինչ գործիքակազմով պետք է չափել տեսչական մարմնի աշխատանքի արդյունավետությունը, օրինակ, հնարավոր է այն չափել պետական բյուջե կատարած մուտքերով, թեկնածուն պատասխանեց, որ իր կարծիքով, բյուջե կատարած մուտքերը գուցե կարող են կազմել ցուցիչի մի մասը և հանդիսանալ բաղադրիչ, սակայն վերջնական գնահատականը պետք է փնտրել քաղաքացի-պետական մարմին կապի մեջ, և

այս հարցում ինքը կարևորում է հասարակության վերաբերմունքը տեսչական մարմնի հանդեպ:

Ն. Սարգսյանի հարցին, թե տեսչական մարմնի որ ոլորտներն են իր համար նախընտրելի, Գ. Սարգսյանը պատասխանեց, որ ինքը պատրաստ է վերահսկել մարմնում այն ոլորտը, որն իրեն կվստահվի ղեկավարի կողմից:

Տ. Գաբրիելյանի կարծիքով, տեսչական մարմնի գործառույթների հիմնական մասն առնչվում է վարչարարությանը, ուստի շատ կարևոր է իրավաբանի մասնագիտությամբ տեղակալ-համակարգողի աշխատանքը տեսչական մարմնում:

Գ. Ավետիսյանը նշեց, որ թեկնածուի ընտրվելու և նշանակվելու դեպքում պատրաստվում է նրան վստահել տեսչական մարմնի վարչական վարույթների, կադրային և իրավական կարգավորումներ պահանջող հարցերը:

Ամփոփելով քննարկումը, նախարարը դրական գնահատեց Գ. Սարոյանի թեկնածությունը՝ կարևորելով պետական կառավարման մարմիններում նրա աշխատանքային մեծ փորձը: Նախարարի առաջարկությամբ Խորհրդի անդամներն անցան քվեարկության:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) *հավանություն տալ Գ. Սարոյանի թեկնածությանը՝ ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար,*
2) *ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար Գ. Սարոյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին,*
3) *հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ հաստատել ղեկավարի տեղակալների գործունեության համակարգման մասին հրաման և պատճենը էլեկտրոնային եղանակով տրամադրել խորհրդի անդամներին:*

5. «Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծ

(Գ.Ավետիսյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ նախագիծը մշակվել է օրինակելի ձևի հիման վրա և առաջարկեց փոփոխել նախագծի 6-րդ կետի բովանդակությունը:

Նախարարն առաջարկեց խմբագրել որոշման նախագծի 6-րդ կետը՝ նշելով, որ Խորհրդի նախագահը նշանակվում է ՀՀ վարչապետի որոշմամբ:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) *լրամշակել որոշման նախագիծը՝ 6-րդ կետում նշելով, որ Խորհրդի նախագահը նշանակվում է ՀՀ վարչապետի որոշմամբ,*
2) *հավանություն տալ որոշման նախագծի խմբագրված տարբերակին:*

6. «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

(Գ. Ավետիսյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ նախագծի ընդունումը հնարավորություն կտա «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի բեռնատար (սառնարան) ավտոմեքենան հետ վերցնել և ամրացնել տեսչական մարմնին՝ նմուշառման և լաբորատոր

փորձաքննությունների կազմակերպման բաժնի կողմից սահմանված կարգով փորձաքննության նպատակով ընտրված նմուշները փորձարկման լաբորատորիա ներկայացնելու նպատակով:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1. Հավանություն տալ որոշման նախագծին:

7. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1640-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

(Գ. Ավետիսյան, Տ. Գաբրիելյան, Բ. Պիպոյան, Ն. Սարգսյան, Ա. Թորոսյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ առաջացել է սպանդանոցների կառուցման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված տարածքների մի մասը հետ վերադարձնելու անհրաժեշտություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տարածքների մի մասը սպանդանոց կառուցելու համար հետաքրքրություն չի առաջացրել և տնտեսվարող սուբյեկտների կողմից սահմանված կարգով դիմումներ չեն ներկայացվել:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1. Հավանություն տալ որոշման նախագծին:

Օրակարգը սպառելուց հետո Խորհուրդը լսեց նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման մասին հաշվետվությունները:

Բ. Պիպոյանին հետաքրքրեց ՍԱՏՄ դիրքորոշումը ռիսկի գնահատումն իրականացնող գիտական կազմակերպություն (կենտրոն) նշանակելու հարցի մասին և թե արդյոք քննարկվել են <<Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու հիմնավորումները, ինչ աշխատանք է տարվել այս ուղղությամբ:

Ա. Ասոյանի պարզաբանմամբ, որպեսզի կառավարությունը նշանակի ռիսկի գնահատման կազմակերպություն կամ կենտրոն, պետք է սահմանվեն չափորոշիչներ, որոնց կբավարարի այդ կազմակերպությունը:

Նախարարի կարծիքով, պետք է գիտական կենտրոնը նշանակվի կառավարության կողմից, առանց չափորոշիչներ սահմանելու, քանի որ օրենքը լիազորում է կառավարությանը նշանակել, նշանակման հետ կապված ձևակերպումը հստակ է, և շատ օրենքներում նման ձևակերպում չլինելու պատճառով բախվում են բազմաթիվ խնդիրների: Նրա առաջարկով, ոլորտի քաղաքականությունը մշակող պետական մարմնի նախաձեռնությամբ պետք է հասնել կառավարության որոշման ընդունմանը:

Բ. Պիպոյանը, մեջբերելով օրենքի դրույթները և հավելելով, որ օրենքը միջազգային փորձաքննություն է անցել, ընդունվել է Եվրամիության օրենսդրության մոտարկման շրջանակներում, կարծիք հայտնեց, որ բավարար չեն դրա փոփոխման հիմնավորումները:

Ա. Ասոյանի կարծիքով, սա պետության կողմից ծառայությունների ձեռքբերում է, և հնարավոր է՝ ինչ-որ կազմակերպություն ավելի լավ ծառայություն մատուցի, պետք է սահմանել համապատասխան չափորոշիչներ, նաև պետք է հաշվի առնել, որ գիտական կենտրոններին և գիտական կազմակերպություններին ներկայացվող ընդհանուր չափորոշիչները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Նախարարի հարցին, թե կա արդյոք ոլորտում միջազգային որևէ կազմակերպության թեկնածությունը քննարկելու նպատակահարմարություն, Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ մեր երկրում նշված չափանիշներին բավարարող միակ գիտական կենտրոնը ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման

տեղեկատվական վերլուծական կենտրոնն է: Նախարարն առաջարկեց կազմել որոշման նախագիծ և հիմնավորման մեջ նշել, թե ինչ չափորոշիչներով են առաջնորդվել:

Բ. Պիպոյանը ներկայացրեց ոլորտում գործող միակ գիտական կենտրոնի անցած ճանապարհը, միջազգային փորձագետների կարծիքը, հավելեց, որ 2011-1014թթ. արվել է առավելագույնը ՀՀ-ում ռիսկի գնահատման ինստիտուտի զարգացման գործում, և եթե կառավարությունը նպատակ ունի նշանակել և աշխատանքները բնականոն հունի մեջ դնել, ապա կարող է հայտարարություն հրապարակել, դիմող կազմակերպություններից ընտրություն կատարել:

Նախարարը քննարկեց նաև այնպիսի իրավիճակ, երբ, օրինակ, ԱԺ կողմից ավելի վաղ ընդունված օրենքի պահանջը հնարավոր չէ կատարել, և կառավարությունը չի կողմնորոշվում նշանակում կատարելու հարցում, կարող է այդ դեպքում օրենքը փոխել, չափորոշիչներ սահմանել: Նախարարի կարծիքով, պետք է գործընթացը նախաձեռնի ոլորտում քաղաքականություն մշակող մարմինը՝ էկոնոմիկայի նախարարությունը, և հետաքրքրվեց, թե ինչու է տեսչական մարմնի կառավարման խորհուրդը քննարկում օրենքի և կառավարության որոշման նախագծի մշակման հարցը, ինչը լիազոր մարմնի իրավասությունների շրջանակում է:

Ա. Ասոյանը պատասխանեց, որ տեսչական մարմնի գործառույթներին վերաբերող հարց է, որն ըստ նպատակահարմարության կարող է քննարկվել տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստում: Ա. Ասոյանը հավելեց նաև, որ Խորհուրդը 17.07.2019թ. նիստում քննարկել է գիտական կենտրոնի վերաբերյալ հարցը, որի արդյունքում հավանության է արժանացրել <<Սննդամթերքի անվտանգության վերահսկողության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրինագիծը, որը նաև շրջանառված և ամփոփված է, ինչպես նաև որոշվել է մինչև ԱԺ-ի կողմից օրենքի ընդունումը՝ գործող կարգավորման շրջանակներում մշակել գիտական կենտրոնի նշանակման և դրա չափորոշիչները սահմանելու մասին կառավարության որոշման նախագիծ և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը: Ըստ խորհրդի որոշման՝ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական վարչության առարկությունների դեպքում հարցին պետք է անդրադառնալ օրենքի ընդունումից հետո:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց աշխատանքային կարգով քննարկել որոշման նախագիծը էկոնոմիկայի նախարարության կողմից շրջանառելու հարցը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ _____
«28» օգոստոս 2019 թ

Ձեր № _____

Լիազորագիր

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետը՝ լիազորում եմ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ Արսեն Թորոսյանին վարել 2019 թվականի օգոստոսի 28-ի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ